ПРАВО

Քրեական դատավարության «ողջամիտ ժամկետ» սկզբունքի հասկացությունը և բովանդակությունը

Ավագյան Գ.Պ.
ՀՀ պետական կառավարման ակադեմիա (Հայաստան, Երևան)
geoavagyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ օրենք, դատավարական ժամկետ, դատական համակարգ, դատական պաշտպանություն, ողջամիտ ժամկետ, քրեական, քրեական դատավարության, օրենսգիրք:

Понятие и содержание принципа "разумного срок" в уголовном процессе

Авагян Г.П.
Академия государственного управления РА (Армения, Ереван)
geoavagyan@gmail.com

Резюме: Эта статья посвящена раскрытию термина "разумный срок", его содержанию и юридическому описанию, который обеспечивает осуществление проблемы уголовного и уголовно-процессуального права. В статье автор подчеркнул важность термина "разумный срок", провел сравнительный анализ. Статья основана на международных правовых актах и национальных положениях, а также на правовые позиции, выраженные в решениях Конституционного суда РА.
Ключевые слова: закон, судебный срок, судебная система, судебная защита, разумный срок, уголовный, уголовный процесс, кодекс.

Concept and content of the principle "reasonable term" in criminal trial

Avagyan G.P.
Public Administration Academy of RA (Armenia, Yerevan)
geoavagyan@gmail.com

Abstract: This article is devoted to disclosure of the term "reasonable term", its contents and the legal description which provides implementation of a problem of the criminal and criminal procedure law. In article the author emphasized importance of the term "reasonable term", carried out comparative analysis. Article is based on the international legal acts and national provisions and also on the legal positions expressed in decisions of the Constitutional court of RA.
Keywords: law, judicial term, judicial system, judicial protection, reasonable term, criminal, criminal trial, code.

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ քրեական դատավարության առանձին հիմնական խնդիրների մեջ մատնանշվում են գործընթացի կրճատման կամ արագացման խնդիրները: Անկասկած է, որ ինչպես ժամկետների, այնպես էլ դատավարական ժամկետների խնայողության մասին հոգսը պետք է կրեն ինչպես օրենսդիրը՝ քրեական դատավարության գործունեությունը կարգավորող նորմերը սահմանելիս, այնպես էլ իրավակիրառողը: Հետաքննության մարմինները, դատախազը, դատարանը պարտավոր են իրականացնել միայն ըստ էության գործողություններ, առանց թույլ տալու գործողությունների կամ որոշումների անհիմն ձգձգում: Նրանց համար առավել կարևորվում է քրեական գործի հանգամանքների քննության լիարժեքության ու համակողմանիության ապահովումը, այլ ոչ թե դատավարական ժամկետի խնայողությունը: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ նախնական քննության ժամանակ փաստացի հանգամանքները պետք է «ամրության պաշարով» սահմանվեն, պետք է ստեղծվի ապացուցողական բազայի ռեզերվ այն դեպքում, երբ գործի հետագա քննության ժամանակ առանձին ապացույցներ կասկածի տակ կառնվեն կամ կբացառվեն:

2001 թվականին ոտք դնելով Եվրախորհուրդ ու ընդունելով Եվրոպական կոնվենցիան, Հայաստանն ընդգրկվեց մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական համակարգի մեջ, որն իր մեջ ներառում է ոչ միայն Կոնվենցիայում ամրագրված իրա-

վունքների ու ազատությունների պահպանության ու կյանքի կոչման պարտականություն, այլեւ՝ մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (ՄԻԵԴ-ի) իրավասության ընդունում:

Կոնվենցիան երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու՝ անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետներում գործի արդարացի ու հրապարակային վարույթ իրականացնելու իրավունքը, որը հիմնված է օրենքի վրա (6. 1 հոդվ.): Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (5.3 հոդվ.):

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող ինչպես սահմանադրական, այնպես էլ կոնվեցիոն դրույթը նպատակ ունի շահագրգիռ անձին պաշտպանել երկարատև անորոշ վիճակից և ապահովել արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը: Գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիան դիտում է որպես անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Եվրոպական դատարանը նշում է, որ այս երաշխիքի նպատակն է դատական քննության բոլոր մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, ինչը կարող է խափանել արդարադատության արդյունավետությունը և վստահությունը վերջինիս նկատմամբ:

Եվրոպական դատարանը մշակել է նաև այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամկետների ողջամտությունը գնահատելիս: Այդպիսիք են՝

- գործի բարդությունը,
- Եվրոպական դատարան դիմած անձի, ինչպես նաև պետաիշխանական մարմինների վարքագիծը, որոնց պատճառով ձգձգվել է գործի քննությունը,
- դիմողի համար դատաքննության առարկա հանդիսացող արժեքի կարեւորությունը:

Գործի բարդությունը որոշելիս Եվրոպական դատարանը ելակետային է համարում այն չափանիշը, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետեւյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթ, մեղադրյալների եւ վկաների թվաքանակ, միջազգային գործոններ, դատավարությանը նոր անձանց ներգրավում, հաշվարկներ, փորձագետների անհրաժեշտություն եւ այլն:

Եվրոպական դատարանի նախադեպերը հաստատում են, որ քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտման փաստը գնահատելիս հաշվի են առնվում միայն օբյեկտիվ պատճառներ: Իսկ մնացածը՝ դատարանների ծանրաբեռնվածությունը, դատավորների անփորձությունը, դատական կամ ընդհանրապես իրավական համակարգի անկատարությունը, մեղադրյալի և նրա պաշտպանի, ինչպես նաև գործի մյուս մասնակիցների վարքագիծը գործի քննությունը ձգձգելու օբյեկտիվ պատճառ դիտվել չեն կարող:

Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ դատական վարույթի տեւողության ժամկետը գնահատելիս դատարանն առաջնորդվում է այն սկզբունքով, համաձայն որի ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցող ձգձգումներով:

Գործերը ողջամիտ ժամկետում քննելուն կարող է մեծապես նպաստել նաեւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության առավել լայն կիրառումը: Դատաքննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը արձանագրել է, որ մեր երկրում կան որոշ խնդիրներ գործերի քննության ողջամիտ ժամկետների հետ կապված՝ ինչպես դատական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրության կատարելագործման տեսանկյունից:

Այսպիսով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն, որը ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է և գերակայություն ունի վերջինիս նկատմամբ, արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերից մեկը գործը ողջամիտ ժամկետում քննելն է: Գործերի քննության անհիմն և չպատճառաբանված ձգձգումները մարդու իրավունքի կոպիտ խախտումներ են:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, որպես արդար դատաքննության իրավունքի օրգանական տարր, Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգ ներմուծվեց 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Քրեական գործերով վարույթի տևողության ողջամիտ ժամկետի հետ կապված Եվրոպական դատարանը ձևավորել է որոշակի սկզբունքներ, որոնք հիմք են հանդիսանում այդ ժամկետի հաշվարկման սկիզբը որոշելու համար: «Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության» գործով Դատարանն ընդհանրացրել է այդ խնդրի հետ կապված իր հետևյալ մոտեցումները. քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունն սկսելու պահից:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը յուրաքանչյուր դեպքում ներպետական վարույթի տևողության ողջամտությունը գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան, դատարանը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառվում են բոլոր գործերի նկատմամբ:

Գործի բարդությունը որոշելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում նաև «ժամանակի և տարածության առումով այն հեռավորությունը, որ կա քննվող դեպքերի կամ փաստերի և դատավարական գործընթացի միջև»: Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում եւ այլն)[1] :

Դատաքննության ժամկետի ողջամտությունը գնահատելիս հաշվի է առնվում կողմի ռիսկի աստիճանի գործոնը, և ակնկալվում է, որ քրեական գործերը, որպես կանոն, պետք է առավել արագացված քննվեն, քան քաղաքացիական գործերը, հատկապես, եթե մեղադրյալը գտնվում է նախնական կալանքի պայմաններում:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը ենթադրում է օպտիմալ հավասարակշռություն դատավարության ընթացքի և դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության միջև:

Գոյություն ունեն ընդհանուր դրույթներ, որոնք սահմանում են «ողջամտություն» եզրույթը կամ էլ ուղղակի թվարկվում են ողջամիտ ժամկետների ընդհանուր մոտեցումները:

Դատավարագետ Ա. Բարակը ենթադրում է, որ ողջամտությունը դատական քննության նյութական սահմանափակում է ու կայանում է մի քանի օրինական հնարավորությունների միջև ինտելեկտուալ գիտակից պայքարի մեջ, որում դատավորը օբյեկտիվ ստանդարտներ է կիրառում: Այդ ժամանակ դատավորի միակ պարտականությունը կայանում է նրանում, որ բոլոր հնարավորություններից ընտրի այն մեկը, որը իրեն կթվա լավագույնը: Ա. Բարակի կողմից առաջ քաշված հասկացությունը արժանի է ուշադրության, այնուամենայնիվ, դրա էական թերությունը դատավորի գործունեության ողջամտության գիտակցական սահմանափակումն է[2]:

Ելնելով ողջամտության տվյալ սահմանումից, կարելի է եզրակացնել, որ այն չի տարածվում դատական մակարդակների վրա, ինչը սխալ է: Այս առիթով Ե. Վ. Ռյաբցեւը գրում է. «Ողջամտություն ասելով համագիտական իմաստով անհրաժեշտ է հասկանալ սուբյեկտին բնորոշ ճանաչողական հատկա-

[1] Տե՛ս **Марковичева, Е. В.** Международные стандарты производства по уголовному делу, Уголовное судопроизводство. – 2009. – № 4, էջ 2:

[2] Տե՛ս **Барак А.** Судейское усмотрение. М. 1999, էջ 148:

նիշ, որը ենթադրում է նրա գիտկացության նորմալ գործունեություն՝ միտված իրերի ու երեւույթների ներքին ու արտաքին կապերի, իմաստային բովանդակության սահմանմանը, համակարգմանը, կարգավորմանը ու բացահայտմանը: Դրա հիմքում ընկած է արխիտեկտոնիկան, որը թույլ է տալիս կառուցել որոշակի գիտելիքների համակարգ վարքագծի համապատասխան տարբերակ ընտրելու համար»[3]:

Վերը շարադրված հասկացությունը, մեր կարծիքով, առավել լայնորեն է բացահայտում «ողջամտություն» եզրույթը՝ որպես քրեական դատավարության մասնակիցների ճանաչողական գործունեություն, որը թույլ է տալիս ընտրել սեփական վարքագծի համար օպտիմալ տարբերակ:

Ողջամտությունը համագիտական իմաստով ներառում է նաև քրեական դատավարության ողջամիտ ժամկետներ: Ա.Ա. Բոգոմոլովի կարծիքով՝ «ողջամիտ ժամկետներ» հասկացությունը գնահատողական է (այն կիրառելիս անհրաժեշտ է ելնել գործի փաստացի հանգամանքներից), որի ներքո առաջարկվում է հասկանալ ընդհանուր, վերացական, ոչ հստակ հասկացություն, որն արտահայտված է իրավունքի այն աղբյուրներում, որոնք կարգավորում են քաղաքացիական ու վարչական դատավարության կարգը ու նախատեսված են այն բանի համար, որպեսզի կոնկրետ գործի շրջանակներում իրավակիրառողին տրամադրեն գործողությունների հարաբերական ազատություն[4]:

Վերը շարադրված հասկացությունների հետ կարելի է համաձայնել, բայց անհրաժեշտ է հստակեցնել, որ ողջամիտ ժամկետների գործունեությունը միայն քաղաքացիական ու վարչական դատավարություններով չի կարելի սահմանափակել. ողջամիտ ժամկետները արտահայտված են իրավունքի աղբյուրներում, որոնք կարգավորում են նաեւ քրեական դատավարությունը:

Ինչպես իրավացիորեն նշել է Ռ. Օ. Օպալեւը, գնահատողական հասկացություններն օրենսդրին լրիվ անհրաժեշտ են: Բայց հեղինակը նաեւ նշում է, որ այդ հասկացություններից պետք է ճիշտ օգտվել՝ ղեկավարվելով ժամանակակից գիտության ցուցումներով, իրավաբանական տեխնիկայի համապատասխան չափանիշներով:

Դոկտրինան, որը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վրա, գործերի քննության ողջամիտ ժամկետներ ասելով հասկանում է, նախեւառաջ, հետաքննության, դատարանի կողմից գործի քննման ու դրա կատարման ընթացքում չպատճառաբանված ճյուղավորումների բացակայությունը:

«Ողջամիտ ժամկետ» մոտեցման բնորոշումը կայանում է դատական որոշման երաշխիքի ապահովման մեջ այնպիսի ժամանակամիջոցում, որը սահմանում է անորոշության վիճակի նվազագույն սահման եւ որի մեջ գտնվում է անձը՝ նրան ներկայացված հանցագործության մեղադրանքով պայմանավորված:

Ինչ վերաբերում է քրեական գործի քննության ողջամիտ ժամկետներին, ապա այստեղ դրսեւորվում ու հաշվի է առնվում կոնկրետ քրեական գործի առանձնահատկությունը, այլ ոչ թե օրենսդրության սահմանած շրջանակները[5]: Հետաքննության տևողության ողջամտությունը անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր դեպքում գործի կոնկրետ հանգամանքներին համապատասխան (գործի բարդության աստիճան, կողմերի վարքագիծ, պետական մարմինների գործողություններ):

Որպեսզի սահմանենք «ողջամիտ ժամկետներ» հասկացությունը, նախեւառաջ անհրաժեշտ է դիտարկել մոտեցումները, որոնցից այն կազմված է: Ողջամիտ ժամկետի սահմանման մոտեցումները (առանձնահատկությունները) թվարկվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում: Դրանք են՝

1. քրեական գործի իրավական ու փաստացի բարդությունը,

2. քրեական դատավարության մասնակիցների վարքագիծը,

[3] Տե՛ս **Образцов А. В.** От разумных сроков в уголовном процессе к принципу разумности//Российский следователь. 2011. N 16:

[4] Տե՛ս **Богомолов А. А.** Разумность сроков рассмотрения гражданских дел // Гражданское судопроизводство в изменяющейся России. Саратов, 2007. էջ 254:

[5] Տե՛ս **Гуценко К. Ф.**, Уголовный процесс: учебник для студентов юридических вузов и факультетов,– М.: Зерцало, 2005, էջ 46:

3. քրեական համաժամանկյա հետապնդման կամ քրեական գործի դիտարկման նպատակով իրագործած դատարանի, դատավորի, հետաքննության մարմնի գործողությունների բավարարությունն ու արդյունավետությունը,

4. քրեական դատավարության ընդհանուր տեւողությունը:

Ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի կոնվենցիոն դրույթներն ամրագրվել են նաեւ ճյուղային օրենսդրությամբ՝ արտահայտելով այս առնչությամբ Եվրոպական դատարանի եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն ու իրավակիրառ դատական պրակտիկայում առկա իրավական մոտեցումները: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի[6] 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննությունը եւ լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում: Դատարանում գործի քննության տեւողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տեւական քննության հետեւանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը, գործի քննության ընդհանուր տեւողությունը եւ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տեւողությունը:

Պետք է հատուկ ընդծել նաեւ, որ ողջամիտ ժամկետի եզրույթն իր ամրագրումն է ստացել նաեւ դատավորների վարքագծի կանոններում: Այսպես՝ 2018թ. ապրիլի 9-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ դատավորն ի պաշտոնե գործելիս պարտավոր է առանց արդարադատությանը վնասելու՝ ողջամիտ ժամկետում...քննել եւ լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը:

Ուշագրավ է, որ դատավորի աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշների մեջ, ի թիվս այլ հանգամանքների, նշված է նաեւ ողջամիտ ժամկետում գործը քննելու եւ լուծելու հանգամանքը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները և լրացումները, որոնք ուժի մեջ են մտել 1999թ. հունվարի 1-ից, նույնպես ձեւակերպել են «ողջամիտ ժամկետ» օրենսդրական եզրույթը: Այսպես՝ օրենսգրքով հստակ սահմանված է, որ վերաքննիչ քրեական դատարանը եւ ՀՀ Վճռաբեկ դատարանը գործը պետք է քննեն եւ լուծեն ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով նաեւ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը: Պետք է հատուկ նշել որ գործող քրեական դատավարության օրենսգրքում «ողջամիտ ժամկետ» եզրույթն օգտագործվում է նաեւ 11-րդ հոդվածի 3-րդ մասում այն առումով, որ անձին ազատությունից զրկելուց հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը պետք է որոշում կայացնի անձի անազատության մեջ պահվելու հետագա կարգի վերաբերյալ, հակառակ դեպքում՝ այդ անձը պետք է անհապաղ ազատ արձակվի:

Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ, օրինակ, քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված բազում փոփոխությունների եւ լրացումների արդյունքում այսօր ունենք մի գովելի իրավիճակ այն առումով, որ ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորումների, երբ, օրինակ՝ քաղաքացիական գործերով գործի լուծման համար սահմանված էր ուղղակի ողջամիտ ժամկետ, առանց առավելագույն ժամկետի սահմանափակման եւ խոսքը վերաբերում էր դատական բոլոր ատյաններին, ապա նոր իրավակարգավորումներով, օրինակ՝ վերաքննիչ եւ վճռաբեկ ատյաններում սահմանվեց գործերի քննության ողջամիտ ժամկետ՝ միաժամանակ սահմանվելով, որ այդ ողջամիտ ժամկետը չի կարող վերաքննիչ դատարանում գերազանցել դիմումը դատարան մուտքագրելուց հետո եռամսյա ժամկետը (ՀՀ քաղ.դատ.օր. 377-րդ հդվ.): Այսինքն՝ այս մոտեցմամբ օրենսդիրն ըստ էության մեծ քայլ կատարեց <<ողջամիտ ժամկետ>> անորոշ եզրույթի իրավական մեկնաբանման համար՝ իրավակիրառողի համար սահմանելով այդ հասկացության գնահատման կոնկրետ եւ օբյեկտիվ չափորոշիչներ:

[6] ՀՀ դատական օրենսգիրքն ուժի մեջ է մտել 09.04.2018թ. (http //www.arlis.am/ Documentview.aspx? Docid=11953):

Մենք լիարժեքորեն համաձայն ենք նման ձեւակերպման հետ, սակայն գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանում ընդունված բողոքների քննության համար օրենսդիրը եւս պետք է սահմաներ քննության ողջամիտ ժամկետ, թեկուզեւ վեցամսյա ժամկետ, որովհետեւ պրակտիկան վկայում է, որ այդ դատարանում գործերի քննությունը պարբերաբար ձգձգվում է:

Պատկերը մի փոքր այլ է քրեադատավարական օրենսդրությունում: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգրքում «ողջամիտ ժամկետը» վերագրված է վերաքննիչ եւ վճռաբեկ ատյանում քրեական գործի քննության ավարտին: Մինչդեռ, այսօր արդեն շրջանառության մեջ է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով առաջարկվել են բավականին առաջատար մոտեցումներ այս առնչությամբ: Մասնավորապես առաջարկվում է՝ համակարգ ներմուծել քրեական վարույթի ողջամիտ ժամկետի գաղափարը, ըստ որի՝ ա) նախաքննությունը եւ դատական քննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում, բ) մեղադրյալն ունի ողջամիտ ժամկետում դատարանի առջեւ կանգնելու իրավունք, գ) անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի ամենակարճ հնարավոր ժամանակահատվածով եւ դ) դատարանը գործերի քննության վարույթները որոշելիս նախապատվությունը տալիս է այն վարույթներին, որոնցով մեղադրյալը գտնվում է կալանքի տակ: Գտնում ենք, որ օրենսդրական նման կարգավորման պարագայում բավարար երաշխիքներ են ստեղծվելու անազատության մեջ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում եւ այդ ոլորտում հավելյալ իրավակարգավորումների առկայությունը միայն ողջունելի է:

Հաջորդ կարեւորագույն փոփոխությունները վերաբերում են քրեական գործի վարույթի ընթացքում դատախազի եւ պաշտպանի հնարավոր փոփոխության հարցին: Այսպես՝ սահմանվում է, որ նոր դատախազին կամ նոր պաշտպանին դատարանը տրամադրում է գործի նյութերին եւ մեղադրանքի կամ մեղադրյալի պաշտպանությանը նախապատրաստվելու համար ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով վարույթի բարդությունը, վարույթի իրականացման համար արդեն ծախսված ժամանակահատվածը եւ այլ հանգամանքներ: Այս դրույթի կենսագործմամբ, ըստ էության, դատարանը չի կարող ժամկետ տրամադրելիս հաշվի չառնել նաեւ ամբողջ վարույթի համար սահմանված առավելագույն ժամկետը:

Հաջորդ փոփոխությունները, որոնք վերաբերում են ողջամիտ ժամկետին, կապված են վարույթի քննության հետաձգման հետ: Մասնավորապես, յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավորվում է վարույթի քննությունը հետաձգել ողջամիտ ժամկետով՝ հաշվի առնելով վարույթի քննությունը շարունակելուն խոչընդոտող հանգամանքների առանձնահատկությունը և դրանց վերացման համար ձեռնարկվող միջոցների բնույթը: Նոր առաջարկվող իրավակարգավորումներով լրացվում են նաեւ նոր մեղադրանքի առաջադրման կամ մեղադրանքի փոփոխության ժամկետները՝ պարտավորեցնելով դատարանին տրամադրել ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով գործի քննության ողջ ժամանակահատվածը եւ սահմանված առավելագույն ժամկետը:

Կարեւորագույն լրացումները, որոնք առաջարկվում են, կապված են ցուցմունքների դեպոնացման ինստիտուտի ներմուծման հետ: Մասնավորապես, առաջարկվում է ցուցմունքների դեպոնացման կարգը, միջնորդության հարուցման կարգը, դեպոնացման մասին որոշման կայացման կարգն ու պայմանները՝ միաժամանակ նշելով, որ ցուցմունքի դեպոնացումը նշանակվում է որոշման կայացումից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան տասն օր հետո: Այսինքն՝ այս ինտիտուտի համար ողջամիտ ժամկետն առաջարկվում է սահմանափակել տասնօրյա ժամկետում, ինչը, կարծում ենք, լրիվ արդյունավետ եւ բավարար երաշխիք է գործի քննության ողջամիտ ժամկետի իրավունքի իրականացման համար:

Հատկանշական է, որ առաջարկվող փոփոխություններով ողջամիտ ժամկետը կիրարկման կոնկրետ դրսեւորում է ստանում վերաքննիչ ատյանում, քանի որ այս պարագայում արդեն խոսվում է ողջամիտ ժամկետի կոնկրետ ժամանակահատվածի մասին, այն է՝ վերաքննիչ դատարանում առաջին դատական

նիստը նշանակվում է քրեական գործը ստանալու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան վերաքննիչ բողոքը ներկայացնելուց հետո երկու ամիսը:

Իրավաբանական գրականության մեջ մինչեւ այսօր էլ շատ հաճախ հարց է ծագում. ի՞նչ պետք է հասկանալ «ողջամիտ ժամկետ» ասելով, ո՞ր պահից այն պետք է հաշվարկել, կարո՞ղ են այստեղ գոյություն ունենալ որևէ կոնկրետ չափանիշներ այդ ժամկետի հաշվարկման համար: Անդրադառնալով «ողջամիտ ժամկետ» հասկացությանը, հարկ ենք համարում տալ «ողջամիտ» բառի իմաստը: Ըստ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի 4-րդ հատորի (Յ-Ֆ) գլուխների «ողջամիտ» բառը որպես ածական ունի հետևյալ իմաստը՝ առողջամիտ, ողջախոհ, առողջ դատող: Եվ եթե վերլուծենք առկա օրենսդրական ձևակերպումները և կատարված փոփոխությունները, ապա ակնհայտ է դառնում հետևյալը՝

- նոր փոփոխությունը, չի ամրագրում, թե՞ որ պահից պետք է սկսի հոսել «ողջամիտ ժամկետ»-ը, ինչը հստակ արտացոլված է քաղաքացիական դատավարության գործող օրենսդրությամբ՝ «հայցադիմումն ընդունելու օրվանից» օրենսդրական ձեւակերպմամբ,
- ավելին, եթե ժամկետը «ողջամիտ» է, ապա այն պետք է լինի հնարավորինս սեղմ, ուստի օրենսդիրը ամրագրելով «իսկ դրա անհնարինության դեպքում ողջամիտ սեղմ ժամկետում պարտավոր է» օրենսդրական կապակցությունը, ըստ էության առաջին ատյանի դատարանին օժտելով նման իրավասությամբ, ինքնըստինքյան ընդունել է, որ «ողջամիտ ժամկետ» հասկացությունը կարող է «կամայական մոտեցումների» տեղիք տալ եւ գործերի քննության անհիմն եւ չպատճառաբանված ձգձգումների առիթ հանդիսանալ:

Ելնելով վերոգրյալից, կարելի է եզրակացնել, որ քրեական դատավարության մինչդատական մակարդակներում քրեական գործի իրավական ու փաստացի բարդության գնահատման ժամանակ հատուկ ուշադրություն է պետք հատկացնել հանցավոր գործողությունների դասակարգման բարդությանը, հանցագործության կատարման հանգամանքների սահմանմանը, քրեական գործի ապացույցների հավաքագրմանը, իսկ քրեական հետապնդման իրականացման կամ քրեական գործի համաժամանակյա դիտարկման նպատակով իրականացված դատարանի, դատավորի, հետաքննության ղեկավարի, քննիչի, քննչական բաժնի ղեկավարի, քննության մարմնի, լիազորի գործողությունների բավարարության ու արդյունավետության գնահատման ժամանակ առանձնացվում է այնպիսի ցուցանիշ, ինչպիսին է գործողությունների ռիթմայնությունը:

Այդ ամենով պայմանավորված՝ անհրաժեշտ է վերը նշված սկզբունքը ներառել քրեական դատավարության ընդհանուր տեսության մեջ՝ որպես քրեական դատավարության ողջամիտ ժամկետների սահմանման մոտեցում:

Դ.Յու.Կոսախինի կարծիքով՝ դատարանը ողջամիտ ժամկետներում դատավարության անցկացման իրավունքի խախտման ժամանակ պետք է հաշվի առնի հանգամանքներ, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝

1. հանգամանքներ, որոնք օբյեկտիվորեն հանգեցնում են դատավարության ժամկետների մեծացմանը,
2. հանգամանքներ, որոնք չեն ազդում գործի բարդության վրա[7]:

Առաջին խմբում գործի մեջ իրավական ու փաստացի բարդության գնահատման ժամանակ ըստ Կոսախինի անհրաժեշտ է ներառել.

- հանգամանքների առկայություն, որոնք բարդացնում են գործի քննությունը,
- գործում ներառված անձանց՝ տուժածների, մեղադրյալների քանակը,
- փորձաքննությունների անցկացման անհրաժեշտությունը, դրանց բարդությունը,
- զգալի քանակությամբ վկաների հարցաքննության անհրաժեշտությունը,
- գործ մեջ արտասահմանցիների մասնակցությունը եւ արտասահմանյան իրավունքի նորմերի կիրառության անհրաժեշտությունը,
- ներկայացված մեղադրանքի ծավալը,
- միջազգային հետաքննչական հանձնարարությունների առկայությունը:

Այստեղ կարելի է ներառել նաև դիմողի կողմից դատավարական պարտականությունների չկատարումը (օրինակ, անհարգելի պատճառներով դատական նիստին բազմակի

[7] Տե՛ս **Сальвиа М.** Прецеденты Европейского суда по правам человека. СПб., 2004, էջ 23:

չներկայանալը), որը հանգեցրել է դատական գործընթացի ողջամիտ ժամկետների խախտման։

Երկրորդ խումբ հանգամանքներին Դ. Յու. Կոսախինը վերագրում է՝

• տարբեր դատական ատյանների կողմից գործի դիտարկումը,

• գործում հանրային իշխանության մարմինների մասնակցությունը,

• դիմողի կողմից դատական պրոցեսի ընթացքում դատավարական միջոցների օգտագործումը, որը տրամադրվում է օրենսդրության կողմից սեփական պաշտպանությունը իրագործելու նպատակով, մասնավորապես, պահանջների փոփոխություն, գործով նյութերի ուսումնասիրում, հայց, դատական ակտերի բողոքարկում,

• գործի քննության հետաձգում, փորձաքննության նշանակում ու անցկացում, դատավորի մասնակցությունը այլ գործերի քննությանը, քրեական գործի վերադարձ դատախազին՝ մինչքննչական հետաննքության ժամանակ քրեադատավարական օրենսդրության թույլատրված խախտումների վերացման նպատակով, եթե նշված գործողությունները հանգեցնում են ողջամիտ ժամկետներում դատավարության իրավունքի խախտման,

• հանգամանքներ, որոնք կապված են դատարանի աշխատանքի կազմակերպման հետ, օրինակ՝ դատական ոչ բավարար կազմ, դատավորի փոփոխում, որի պատճառ կարող են լինել վերջինիս հիվանդությունը, ուսման հանգամանքը, արձակուրդում գտնվելը, լիազորությունները դադարեցնելը եւ այլն։

Այնուամենայնիվ, վերը թվարկված հիմնավորումների առաջին խումբն ուղղակի հստակեցնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթները ու առանձնացնում այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են գործում ներգրավված անձանց, մեղադրյալների, տուժածների, կասկածյալների թիվը, փորձաքննությունների անցկացման անհրաժեշտությունը, դրանց բարդությունը, զգալի քանակի վկաների հարցաքննման անհրաժեշտությունը, գործում օտարերկրացիների ներգրավվածությունը, օտարերկրյա իրավունքի նորմերի կիրառության անհրաժեշտությունը, ներկայացված մեղադրանքի ծավալը, միջազգային հետաքննչական հանձնարարությունների առկայությունը, դատավարական պարտավորությունների չկատարումը։

Պետք է նշել, որ ողջամիտ ժամկետը պարզաբանելու համար գոյություն չունեն հստակ ցուցումներ անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում[8]։ Ամեն առանձին դեպքում նա կողմնորոշվում է՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ գործի բարդություն, քրեական պրոցեսի մասնակիցների վարքագիծ։ ՄԻԵԴ-ը ընդունում է որպես ձգձգում միայն պետության՝ նախնական քննության մարմինների, դատախազների, դատավորների, պաշտոնավորների անբարեխիղճ գործողությունները։ Օրինակ, երբ դատավորները հորինված պատճառաբանությամբ մերժում են ընդունել դիմումները, հետաձգում են կամ կանգնեցնում քննությունը և այլն։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գործի քննությունը հինգ տարիների ընթացքում կարելի է ե՛ւ ողջամիտ համարել, ե՛ւ խախտում։

Շատ մասնագետներ համարում են, որ օրենսդրի կողմից ոչ կոնկրետ ժամանակային սահմանների հաստատումը չի հանգեցնի դատավարության ժամկետների կրճատմանը միտված անհրաժեշտ արդյունքի բավարարման, իսկ «ողջամիտ ժամկետներ»-ի ներմուծումը նշանակում է, որ պետությունը հաստատել է տարբեր ատյաններում գործի անցման կոնկրետ ժամկետների սահմանման անիմաստությունը։

Ի. Միխայլովի կարծիքով՝ «Դատարաններ-ը այժմ ազատված են գործի քննության ժամկետների «պահպանման» անհրաժեշտությունից, ինչը անհրաժեշտ է դատավարության տարբեր աստիճաններում։ Չէ՞ որ դեռեւս 1910-ականներին ցանկացած ձգձգում կարելի էր արդարացնել նրանով, որ գործի որևէ ողջամիտ ժամկետ չի խախտվել»[9] ։

---

[8] Տե՛ս «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ». Case of Brualladel a Torrev. Spain, judgment, 19 դեկտեմբերի 1997 թվական, կետ 33, Edificacion es March Gallego S.A. v. Spain, judgment, 19 փետրվարի 1998 թվական, կետ 34, ինչպես նաև «Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 07 փետրվարի 1995 թվականի քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ինստիտուտների և ընթացակարգերի ներդրման ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ» անդամ պետություններին ուղղված NR (95) 5 առաջարկությունների 5-րդ կետի g) և e) ենթակետերը։

[9] Տե՛ս **Энгельман И. Е.** Курс русского гражданского судопроизводства. Юрьев, 1912, էջ 399:

Սակայն, մեր համոզմամբ, ողջամիտ ժամկետի հենց անորոշ ժամանակային շրջանակները, որոնք պետք է գնահատվեն յուրաքանչյուր գործի համար անհատապես, թույլ կտան կրճատել դատավարության տեւողությունն ամբողջությամբ:

Մենք գտնում ենք, որ դատավարության որոշակի ժամկետների սահմանումը ոչ մի կերպ չէր տարբերվի հերթական ժամկետից ու մի կողմից էլ թույլ կտար մեծացնել դատավարության ժամկետները կոնկրետ ոչ բարդ գործերի քննության ժամանակ, և հակառակը, ազդակ կհանդիսանար նախնական քննության մարմինների ու դատարանի համար, որպեսզի վերջիններս դիտարկեն առավել բարդ գործերը տվյալ ժամկետի շրջանակներում՝ անկախ որակի մասին մտահոգվելու:

Կարծում ենք, որ տեղին չեն նաեւ Ա.Ն.Գուեւի եւ Ա.Ա.Մոխովի այն մեկնաբանությունները, որ ողջամիտ ժամկետում գործի քննության տեւողության մեջ չպետք է հաշվարկել դատարանի աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ եւ վերադաս դատական ատյաններում գործի քննության ժամանակահատվածները, եթե օրենքով նախատեսված դատավարական ժամկետները չեն խախտվել[10]: Մեր կարծիքով՝ արդարադատության հիմնական նպատակը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է, որը պետությունը երաշխավորում է դատարան դիմողի համար ողջամիտ ժամկետում իրավական (օրինական եւ հիմնավորված) վերջնական դատական ակտ ստանալու՝ իրավունքի լիարժեք ապահովման միջոցով: Գործի քննության ժամկետի ողջամտությունը քննարկելիս, թերեւս, պետք է հաշվի չառնել միայն դատավորի ինքնաբացարկի դեպքում վերջինիս փոխարինման ժամանակահատվածը, երբ գործի քննությունն ըստ էության պետք է սկսվի ամենասկզբից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այսօր ժամկետի ողջամտության գնահատման չափանիշ է դիտում գործի բարդությունը, դիմողի եւ պետության վարքագիծը, որոնք կարող են գործի ձգձգման պատճառ հանդիսանալ: Եթե Եվրոպական դատարանը կարևորում է իշխանությունների վարքագիծը, որը ներառում է հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի հետագա խախտումները բացառելուն ուղղված անհապաղ արդյունավետ միջոցառումները, ապա քրեական դատավարությունում առավելապես կարևորվում է դատավարության մասնակիցների վարքագծի և սեղմ ժամկետում քրեական գործի քննության ու ճիշտ լուծման համար պատասխանատու դատարանի գործողությունների նպատակահարմարությունն ու իրավաչափությունը: Կամ՝ եթե Եվրոպական դատարանը շեշտը դնում է դիմողի համար իրավական պաշտպանության ենթակա արժեքի վրա, ապա քրեական դատավարությունում կարեւորվում են դատավարության մասնակցի համար գործի տեւական քննության հետեւանքները, քանի որ իրավական պաշտպանության են ենթակա սուբյեկտիվ իրավունքի խախտման բացասական հետևանքները վերացնելուն ուղղված կամ, այսպես կոչված՝ փոխհատուցման պահանջները:

Գործի քննության «ողջամիտ ժամկետ» հասկացության բովանդակության բացահայտմանն է անդրադարձել նաև Եվրոպական դատարանը, մասնավորապես, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. «Դատարանը իրազեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են .... վեճերի քննությունը, ինչը ծանոթ է ազգային դատարաններին, և որոնք բխում են տարբեր գործոններից: Մնում է միայն, որ 6–րդ հոդվածի 1–ին կետին համապատասխան՝ գործերը քննվեն ողջամիտ ժամկետում. Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը»: Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետում ամրագրված՝ դատական քննության տևողության ողջամիտ բնույթը պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում՝ գործի հանգամանքներին համապատասխան և հաշվի առնելով դատարանի պրակտիկայում ամրագրված չափանիշները, մասնավորապես, գործի բարդությունը,

[10] Տե՛ս **Гуев А.Н.**, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, 2000, էջ 215:

հայցվորի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ողջամիտ ժամկետի իրավական բովանդակության լրիվ բացահայտման առումով թե՛ օրենսդրությամբ, թե՛ իրավակիրառ պրակտիկայում առկա են տարընկալումներ: Բանն այն է, որ օրենսդրությամբ սահմանված ողջամիտ ժամկետի իրավական բնութագիրը շատ դեպքերում անորոշ է, առկա է այն բնութագրող առանձնահատկությունների ոչ հստակ ամրագրում, ինչը իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տարակերպ և կամայական մեկնաբանության: Մինչդեռ, իրավական պետության բնութագրիչներից մեկն այն է, որ օրենքներն ու նորմատիվ ակտերը պետք է սահմանված լինեն բավարար հստակությամբ՝ հնարավորություն չտալով դրանց տարբեր մեկնաբանությունների, ինչը հանգեցնում է կամայականությունների:

Մեկ բան աներկբա է՝ դատական գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի պաշտպանությունն իր ուրույն դերակատարումն ունի մարդու իրավունքների պաշպանության համակարգում եւ ըստ էության նպատակ ունի հնարավոր բոլոր միջոցներով կանխել դատական քաշքշուկներն ու դատավարական անհարկի ձգձգումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Барак А.** Судейское усмотрение. М. 1999
2. **Богомолов А. А.** Разумность сроков рассмотрения гражданских дел // Гражданское судопроизводство в изменяющейся России. Саратов, 2007
3. **Гуев А.Н.**, Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, 2000.
4. **Гуценко К. Ф.**, Уголовный процесс: учебник для студентов юридических вузов и факультетов. – М.: Зерцало, 2005.
5. **Марковичева, Е. В.** Международные стандарты производства по уголовному делу, Уголовное судопроизводство. – 2009. – № 4
6. **Образцов А. В.** От разумных сроков в уголовном процессе к принципу разумности // Российский следователь. 2011. N 16
7. **Сальвиа М.** Прецеденты Европейского суда по правам человека. СПб., 2004.
8. **Энгельман И. Е.** Курс русского гражданского судопроизводства. Юрьев, 1912